



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«14» 06 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000045

Ձեռնարկողը՝

«ՆՕՄ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
Ք. Երևան, Աբովյան 29

Գործունեությունը՝

Երևանի Հակոբ Կարապենցի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000045

«14» 06 2019թ.

Երևանի Հակոբ Կարապենցի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ <<ՆՕՄ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝ Երևան քաղաք
Գործունեության կատեգորիան՝ «Գ»

Երևանի Հ. Կարապենցի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցումն իրականացվելու է դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի շրջանակում Ասիական Չարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ՝ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ:

Նախագծվող Հ. Կարապենցու անվան թիվ 6 հիմնական դպրոցը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Էրեբունի վարչատարածքային համայնքում Ս. Դավիթ 2 հասցեում գտնվող գործող թիվ 6 հիմնական դպրոցի տարածքում: Նախագծվող դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 1995 ք.մ, իսկ դպրոցի ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 6370 քմ:

Կառուցապատվող տարածքը հանդիսանում է Երևանի թիվ 6 դպրոցին ՀՀ կրթության և գիտության նախարարությանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով (պայմանագիր, 06/03/2015թ. 1712) տրամադրված գույք:

Դպրոցը կառուցվելու է սեյսմիկ կարերով միացված 3 մասնաշենքերից, որոնք եռահարկ կառույցներ են: Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ նախատեսվում է պահպանել գոյություն ունեցող դպրոցի հիմնական «Ա» մասնաշենքը, իսկ «Բ» և «Գ» մասնաշենքերը կկառուցվեն հիմնովին:

Դպրոցի հիմնական մուտքը նախատեսվում է իրականացնել նոր կառուցվող «Բ» մասնաշենքի աջակողմյան հատվածից, դպրոցը կունենա 6 երկրորդական արտաքին մուտքեր, որոնց տեղադիրքի ընտրությունն իրականացված է այնպես, որ դպրոցի համալիրն ամեն ուղղությամբ ունենա առնվազն 1 էվակուացիոն ելք: Բացի այդ մուտքերի



դասավորվածությունը կատարվել է այնպես, որ նախագծվող դպրոցի որոշ տարրեր (սպորտ դահլիճ, ճաշարան) ունենան նաև առանձին կազմակերպված մուտքեր:

Դպրոցի նախագծում հաշվի են առնված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ երեխաների համար անհրաժեշտ նախագծային լուծումները: Հին և նոր կառուցվող մասնաշենքերի («Ա» և «Բ») սահմանային հատվածում նախատեսվում է երկկողմանի վերելակ, նախատեսվում է նաև հարմարեցված սանհանգույց («Գ» մասնաշենք) և թեքահարթակ «Բ» մասնաշենքի երկրորդական մուտքում:

Նորակառուց մասնաշենքերի արտաքին պատերի հարդարումը նախատեսվում է իրականացնել ֆիբրոցեմենտային պանելներից: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների տեսանկյունից պատերի ջերմամեկուսացումը կիրականացվի տերմոպլեքս նյութով: Նախագծվող դպրոցի տանիքը նախագծվում է լանջավոր՝ կազմակերպված արտաքին ջրահեռացմամբ: Տանիքի ջրամեկուսացման համար նախատեսվում է օգտագործել պենոպոլիստիրոլի երկշերտ ջրամեկուսիչ թաղանթ:

Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից, բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ նաև դպրոցի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը:

Նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցերը:

Դպրոցին կից նախատեսվում է կառուցել 28քմ մակերեսով կաթսայատուն: Կաթսայատունը նախագծվում է որպես ե/բ սյունահեծանային միահարկ կառույց, կանոնավոր տուֆի շարվածքից, իսկ պատերի արտաքին լուծումներում կօգտագործվեն 50մմ ց/ա բարձրորակ սվաղ և ճակատային ներկ, ներքին լուծումներում՝ բարձրորակ սվաղ և լատեքսային ներկ:

Նախագծվող դպրոցը կունենա նաև ասֆալտապատ բացօթյա մարզահրապարակ և խաղահրապարակ՝ 572.4 քմ ընդհանուր մակերեսով և բարեկարգված կանաչապատ գոտի՝ 343.50 քմ մակերեսով: Կանաչապատ գոտին նախատեսվում է համալրել բուսահողով և ստեղծել սիզամարգեր և իրականացնել ծառատունկ՝ մոտ 40 ծառ, որոնց հետագա խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը:

Նախագծվող դպրոցի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել Ս. Դավթի փողոցով անցնող $d=500$ մմ տրամագծով ջրագծով՝ $d=25$ մմ միացումով, իսկ կոյուղաջրերի հեռացումը կիրականացվի $d=500$ մմ տրամագծով քաղաքային կոյուղագծից՝ $d=200$ մմ միացման միջոցով:

Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել թվով 11 էլեկտրական ծավալային ջրատաքացուցիչների միջոցով:

Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել ինքնահոս՝ $\Phi 50$ - $\Phi 100$ մմ տրամագծի պոլիպրոպիլենե խողովակներով: Կոյուղու կանգնակների վրա նախատեսված են ստուգիչներ՝ կոյուղու համակարգում առաջացած խցանումները վերացնելու նպատակով:

Անձրևաջրերի հեռացումը տարածքից նախատեսվում է իրականացնել ասֆալտապատ ուղիներով ինքնահոս եղանակով՝ պայմանավորված տեղանքում առկա նիշերի տարբերությամբ, դեպի դպրոցի կանչապատ գոտի:

Դպրոցի ջեռուցման համակարգերի, ինչպես նաև օդափոխման համակարգերի ջերմամատակարարումը նախատեսվում է իրագործել նորակառույց կաթսայատան միջոցով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային երկու կաթսաների միջոցով բնական գազի այրմամբ՝ 8000 կկալ/մ³, իսկ որպես պահուստային վառելիք անհրաժեշտության

դեպքում կօգտագործվի հեղուկ վառելք՝ 10000կկալ/մ³: Բնական գազի հաշվարկային առավելագույն ծախսը գնահատվում է 49,5 մ³/ժ:

Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսայի և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում:

Նախատեսվող գործունեությունը կիրականացվի երկու իրար հաջորդող մասնաշենքերի և օժանդակ կառույցների ապամոնտաժմամբ և բուն շենքի կառուցման փուլերի իրականացմամբ: Ապամոնտաժման աշխատանքները նախատեսվում են իրականացնել 6 ամսյա ժամանակահատվածում, իսկ վերանորոգման և վերակառուցման աշխատանքները հաշվարկվում են 16 ամիս:

Դպրոցի շենքի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր՝ ձեռք բերված լիցենզավորված մատակարարներից:

Համաձայն ապամոնտաժման աշխատանքների նախագծի մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքները կսկսվեն շենքի թիթեյա տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամոնտաժմամբ, որից հետո կիրականացվեն սկզբում երրորդ հարկի ծածկի ապամոնտաժումը, իսկ այնուհետև կտրող գործիքների օգնությամբ մասնաշենքերի կոնստրուկտիվ կարերի և պատերի քարերի ապամոնտաժման գործողությունները, ինչպես նաև ջրթող խողովակների և ձևավոր մասերի հեռացման աշխատանքները: Այնուհետև նույն հաջորդականությամբ կիրականացվեն երկրորդ և առաջին հարկերի ապամոնտաժումը: Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ՝ բանվորական կազմի կողմից և կբացառվեն այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինարարական նյութեր, կտեղափոխվեն շին-կապալառուի պահեստ և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից՝ այլ շինարարական աշխատանքներում, իսկ գոյացած շին աղբը՝ մոտ 10893 տ, ինքնաթափերով կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր (Ն2391-Ա, 2016թ. հունիսի 30):

«Բ» և «Գ» մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքների ավարտից հետո կիրականացվեն գոյություն ունեցող մարզադահլիճի ապամոնտաժման աշխատանքները: Աշխատանքի անվտանգ կազմակերպման նկատառումներից ելնելով նախատեսվում է հրապարակի նախնական ցանկապատում՝ մարզադահլիճին կից տարածքում, ժամանակավորապես իրականացվելու է կից մանկապարտեզին պատկանող 3.3մ երկարությամբ հողատարածքի օգտագործում: Ապամոնտաժման աշխատանքներն ավարտելուց և տարածքը մաքրելուց հետո նշված մասում կիրականացվեն հենապատերի և ճաղաշարի տեղադրման աշխատանքներ, իսկ ժամանակավոր մետաղական ցանկապատը կվերատեղադրվի գործող դպրոցի վարչատարածքային սահմանով: Մարզադահլիճի ապամոնտաժումը կսկսվի ծածկի և միջհարկային սալերի ապամոնտաժմամբ, ինչը նախատեսվում է իրականացնել զոդման միջոցով սալերի և սյուների անջատմամբ, այնուհետև վերջինները ճոպանների միջոցով կմիացվեն թրթուռավոր կոունկին և դանդաղ կտեղափոխվեն հրապարակի ազատ տարածություն:

Ապամոնտաժման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել դաշտի աշխատանքները, որի շրջանակում կկառուցվեն դաշտի հենապատերը և կտեղադրվեն հենապատերի վրայի ճաղաշարերը: Հենապատերի կառուցման ավարտից



հետո, նախատեսվում է դպրոցի շենքի կառուցման աշխատանքները, հետևյալ հաջորդականությամբ՝ կաթսայատան կառուցման, այնուհետև դպրոցի մասնաշենքերի փոստրակի մշակման աշխատանքները: Պահպանվող «Ա» մասնաշենքի ամրացման աշխատանքների շրջանակում կիրականացվեն շենքի հիմքերի և հիմնապատերի, սյուների և հեծանների ուժեղացման, որից հետո «Բ» և «Գ» մասնաշենքերի հիմքերի և շենքի կառուցման շինարարական աշխատանքները: Այս աշխատանքներին զուգահեռ կկատարվեն «Ա» մասնաշենքի վերանորոգման աշխատանքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում հողային աշխատանքների շրջանակում տարածքի ուղղաձիգ հարթեցումից առաջացող հողային հանույթի ընդհանուր ծավալը գնահատվում է 5943մ³, որից 2649մ³ կօգտագործվի հետլիցքի և բարեկարգման աշխատանքների շրջանակում, իսկ տեղափոխվող գրունտը կկազմի 3294մ³: Շինարարական հրապարակի կազմակերպումը՝ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը, շինարարական տեխնիկայի կայանատեղին կիրականացվի դպրոցի տարածքի վարչական սահմանների ներսում:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխատեսվում են շինարարության փուլում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության տևողությամբ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով դպրոցի կառուցապատվող տարածքը:

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր կեղտաջրերի արտահոսքերը և արտանետումները:

Կիրականացվի թվով 9 ծառի հատում: Նախատեսվում է նաև նշված հատվածից հեռացնել շինաշխատանքների ընթացքին խանգարող ինքնաբերաբար աճած թփերը: Հետագայում կանաչապատման աշխատանքների շրջանակում տարածքը կհամալրվի սիզամարգերով և կտնկվեն թվով 40 ծառեր, որոնց տեսակը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ: Ազդեցության ենթակա ծառերի հատումը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցմամբ և անհրաժեշտ թույլտվությունների առկայության դեպքում:

Շինարարության և հետշինարարական փուլերում կիրականացվեն տարածքում առկա ծառերի և թփերի վիճակի մշտադիտարկում/վերահսկում ծրագրի պատվիրատուի՝ ՀՏՀ-ի կողմից, ԱԶԲ-ի կողմից մշակված մոնիտորինգային ստուգաթեթիկին համաձայն:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու է օդային ավազանի աղտոտվածություն՝ անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ, ինչպես նաև դիզելային շարժիչով աշխատող մեքենաների արտանետումներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ աշխատանքների համար, ինչպես նաև կենցաղային նպատակով:

Եզրահանգում

Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելվելու և մեղմելու նպատակով մշակվել են մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների ազդեցության նվազեցմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը զգալի չէ և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:



Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջ

- Շինարարության ընթացքում առաջացած թափոնների հեռացումը /շինադրը, կենցաղային ադրը/, անհրաժեշտ է իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ:
- Ծառերի հատումն ու կանաչապատումն իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցման և անհրաժեշտ թույլտվությունների առկայության դեպքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՆՕՄ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևանի Հակոբ Կարապետցի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. Մասնագետ՝



Զ. Զուռնայան